ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«23» հունվարի 2025թ.
N 01-01

ՀՀ Վարչապետ

Նիկոլ Փաշինյանին

Մեծարգո պարոն Վարչապետ

2026 թվականից ուժի մեջ մտան «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը և այդ բարեփոխման հետ կապված հարակից իրավական ակտերը:

Ողջունում ենք, որ խոցելի խմբերը հնարավորություն ստացան անվճար ներառվել համակարգում: Այնուամենայնիվ, աշխատողների, մասնավորապես սոցիալական փաթեթի շահառուների շրջանում **տարակուսանք է առաջացել** համակարգում ներառվելու պայմանների անհամաչափության վերաբերյալ:

Բարեփոխման առաջին փուլում 200 հազարից բարձր աշխատավարձ ունեցող վարձու աշխատողները դառնում են ապահովագրված, և համընդհանուր ապահովագրության հիմնադրամին պետք է վճարեն ամսական 10 800 դրամ ապահովագրավճար:

2026 թվականի համար, պետությունը որոշել է սուբսիդավորել մինչև 500 հազար աշխատավարձ ստացողների ապահովագրավճարը՝ ամսական 6000 դրամի չափով: Այդ մասին իրազեկվել է՝ հայտարարելով, որ աշխատողների եկամուտը փաստացի պակասելու է 300 դրամով: Միաժամանակ հայտարարվել է, որ 200 հազարից բարձր վարձատրվող սոցփաթեթի շահառուների մոտ ոչինչ չի փոխվելու, նրանք դառնալու են համընդհանուր ապահովագրության շահառու՝ առողջապահության ավելի ընդարձակ ծածկույթով:

Այնինչ, օրենքի ընդունումից հետո պարզվեց, որ սոցփաթեթի շահառուները պետք է վճարեն ապահովագրավճարն ամբողջովին:

Սոցփաթեթի շահառուների շրջանում դա առաջացրել է դժգոհություն: Նրանք ունեին անվճար առողջության ապահովագրություն և այլ ուղղություններով տնօրինելու 72000 դրամ անկանխիկ գումար: Այժմ ստացվում է, որ նախկին անվճար

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut

ապահովագրության համար պետք է վճարել ամսական 10800 դրամ: Իսկ եթե աշխատողը չի ուզում վճարել 10800 դրամը աշխատավարձից, կարող է վճարել 4800 դրամը, իսկ մնացած 6000-ը լրացնել սոցփաթեթի գումարից: Այսպիսի կարգավորմամբ վատթարանում է սոցփաթեթի շահառուների վիճակը և **նրանց դժգոհությունն արդարացի է**: Ստեղծվում են նաև **խտրական պայմաններ** սոցփաթեթի շահառուների և մնացած աշխատողների միջև. եթե մնացած 200-500 հազ. աշխատավարձ ստացող աշխատողները եկամտի 300 դրամով պակասելու հաշվին ձեռք են բերում առողջության ապահովագրություն, ապա սոցփաթեթի շահառուները նույն պայմանների համար պետք է կամ վճարեն 6300 դրամ, կամ հրաժարվեն սոցփաթեթն այլ ուղղություններով ծախսելու հնարավորությունից:

Բազմիցս հայտարարվում է, որ պետական աշխատողներն առանց այդ էլ ցածր են վարձատրվում, սակայն վերոնշված կարգավորումներով սոցփաթեթի շահառուների համար հավելյալ ֆինանսական բեռ է ավելանում:

Որպես պետական և համայնքային ոլորտի աշխատողներին միավորող և շահերը ներկայացնող արհմիություն, **խնդրում ենք վերանայել վերոնշված մոտեցումը**՝ պահպանելով աշխատողների սոցփաթեթի 72000 դրամը և սուբսիդավորել ապահովագրավճարը, ինչպես դա արվում է մնացած աշխատողների պարագայում:

Հարգանքով՝

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների ճյուղային արհմիության նախագահ Հաստատված է էլ ստորագրությամբ **Անահիտ Ասատրյան**